ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

N 41 ք. Արտաշատ

< 01 > 03 2018թ.

## ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ներքին աուդիտի 2018 թվականի տարեկան ծրագրով.

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դալարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2018 թվականի մարտի 2-ից մինչև մարտի 7-ը ներառյալ՝ 4 աշխատանքային օր, իրականացնել ներքին աուդիտ:
2. Ներքին աուդիտի իրականացման շրջանակում ընդգրկել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի <<Դալարի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2015, 2016 և 2017 թվականների ընթացքում իրականացրած ֆինանսական գործառույթները, գնումների գործընթացները, նախատեսված և կատարված փաստացի ծախսերի համեմատումը, աշխատավարձերի հաշվարկման կարգը, հաշվետվությունների արժանահավատությունը և համապատասխանությունը օրենքներին և այլ իրավական ակտերին:
3. Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նելլի Սիմոնյանին՝ կատարել գործուղման ծախսերի վճարում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ